Արձանագրություն N 3

<< ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Հ-26>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Երևան

<< 02>> << 05>> 2024թ. ժամը 11:00

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Հ-26 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Ա. Ներսիսյանը նիստը հայտարարեց բացված:

1. Տվյալներ ընթացակարգի ընթացքի մասին

Գնահատող հանձնաժողովի կողմից գնահատման նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և Մարիամ Պետրոսյան Խաչատուրի Ա/Ձ-ին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Շտկումը չի կատարվել մասնակցի կողմից: Մարիամ Պետրոսյան Խաչատուրի Ա/Ձ-ի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2024/Հ-26 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԱՐԹ ՎԱՐԴ ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի կողմից կձեռնարկվեն միջոցներ Մարիամ Պետրոսյան Խաչատուրի Ա/Ձ-ին ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն:

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ներսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Դուրգարյան

Ք.Ավետիսյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան